



N _____

«09» սեպտեմբերի 2011 թ.

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի ընդհանուր ժողովի թիվ 02 արձանագրությունից:
07 հուլիսի 2011 թ.

Ժողովի նախագահ՝ Աստղիկ Էլլարյան
քարտուղար՝ Նադյա Ավետիսյան

2011 թ. հուլիսի 7-ին կայացավ Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում են 117 բնակիչներ:

Ժողովի նախագահ՝ Աստղիկ Էլլարյան
քարտուղար՝ Նադյա Ավետիսյան

Օ Ր Ա Վ Ա Ր Գ

1. 2011 թ. երկրորդ եռամսյակի հաշվետվություն

Լզեկ.՝ համայնքի ղեկավար Կ. Էլլարյան/

Լսեցին. համայնքի ղեկավար Կ. Էլլարյանի զեկուցումը 2011 թ. երկրորդ եռամսյակում կատարած աշխատանքների մասին:

Նշեց, որ 2011 թ. բյուջեի երկրորդ եռամսյակի եկամտային մասով նախատեսված պլանային թվի համեմատ կատարվել է

	պլան	կատ.	%
հողի հարկ-	1120.0	776.9	69.3
գույքահարկ -	289.0	133.3	46.1
հողի վարձավճար-	600.0	395.0	65.8
տեղական տուրք-	52.0	20.0	38.4

Վերանորոգվել է համայնք մտնող 1 կմ երկարությամբ ջրագիծը, 100 խմ տարողությամբ ջրամբարը, որը շուրջ 40 տարի չէր շահագործվում, որից օգտվում են նոր թաղամասի 25 տնտեսություններ:

Ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը համայնքում կազմակերպվել է բարեկարգման, սաննաքրման, կանաչապատման աշխատանքներ:

Նշվել է Մայիսի 9-ը, Հայրենական պատերազմի վետերաններին տրվել է նվերներ, կազմակերպվել ճաշերույթ:

Համայնքում ձևավորվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, որն ուսումնասիրել է սոցիալապես անապահով ընտանիքների ընտանեկան վիճակը:
Սոցիալապես անապահով վեց ընտանիքների տրվել է դրամական օգնություն:

Կան բացթողումներ և թերացումներ, համայնքի չլուծված հիմնախնդիրներից է խմելու ջրի պակասը, ոռոգման ջրի բացակայությունը, աղբահանությունը:

Ժողովը որոշեց՝

1. Համայնքի ղեկավարի երկրորդ եռամսյակում կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Ժողովի նախագահ՝
քարտուղար՝

Ա. Էլլարյան
Ն. Ավետիսյան

Սարիգյուղ համայնքի



Կ. Էլլարյան

Իսկականի հետ ճիշտ

Աշխատակազմի քարտուղար

Ա. Էլլարյան